ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր եւ արտաքին կապերի բաժին

N 9850 17 OCT 2017 ժամ «16» հոկտեմբեր 2017թ No 2979-Ա

Կից ☐ Դեղի Հայաստանի
Նշումներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի N 347 որոշման 18-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0103182517 առ 11.10.2017թ. գրությունը և դեղի պարզ ընթացակարգով կատարված փորձագիտական եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Գրանցել երաշխավորված թվով 1 դեղը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Թոփչյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշելով սույն հրամանի տրման օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

17.10.17
10⁰⁰

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2017 թվականի հոկտեմբերի 16 - ի
N 2979 – Ա հրամանի

Պարզ ընթացակարգով կատարված փորձաքննության եզրակացության հավելված

հ/հ	Առևտրային անվանումը	միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները	դեղաձևը	դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը)	արտադրող ֆիրման	արտադրող երկիրը	գրանցման հավաստագրի իրավատերը	բացթողման կարգը	եզրակացության համարը և ամսաթիվը
1.	Ներվոմիքս	կատվախոտի արմատներ, պատրինջի տերևներ, գայլուկի պտղաբույլեր, սրոհունդի խոտ	դեղապատիճներ կոշտ	210մգ+52,5մգ+52,5մգ+35մգ; (30/3x10/) և (60/3x20/) բլիստերում	Պոլֆա դեղագործական գործարան Պաբիանիցեում ԲԸ, 5 Մարշալկա Ջ. Պիլսուդսկիեգո փ., 95-200 Պաբիանիցե	Լեհաստան	Ադամեդ Քոնսումեր Հելթքեյր Ս.Ա., Պիենկով 149, 05-152 Չոսնով, Լեհաստան	ԱԴ	17085 11.10.2017